

տուժոյ առեալ զառհաւատչեայն աստ: Ձի ի սպառել շնչոյն անդ յէտրէնէ պատմեցին տեսողք ոչ միայն ի տան անդ ի պատանու մն գիւոյն՝ այլ եւ յեկեղեցի հասարակք տեսեալ ժողովուրդք, տեսանէին զպատանսն ներկեալ, այսինքն՝ վիժելով զմաղձ դառնացելոյ լեզուոյն ի ներքուստ արտաքս ելեալ՝ որպէս զքիրտ ներկէր զբոլոր դառնացեալ զանձն գարշելի: Որ խօսէր գաղտ զընկերէն նենգաւոր եւ չարաթոյն լեզուն, սիրողն չարութեան քան զբարութեան, անձանձրապէս զխօսից կործանման, նա՝ որ պարծէրն յանիրաւութիւն հզօրապէս եւ ի խորհրդականութեան իւրում գոռոզանայր, որ խօսէր ընդ ընկերս իւր զխաղաղութիւն եւ չարութիւն էր ի սիրտս իւր ծրարեալ եօթնեկի չարեօք նենգութեան, որ խօսէր գաղտ զընկերէն իւրմէ ազահ սրտիւք եւ ամբարտաւան աչօք, որոյ կակուղ էր բանք իւր քան զձէթ եւ ինքն որպէս սլաք հարեալ ի սիրտս անփորձից, որ բերանօքն օրհնէր եւ սրտիւքն անիծանէր, որ դնէր առաջի անմեղաց առաջարկեալ զխաղաղութիւն եւ ինքն բարկութեամբ զնենգութիւն խորհէր, որ նմանն էր օձի, իժի եւ քարբի զի խցեալ էր զականջս իւր զի մի լուիցէ զձայն թովչի ճարտարի եւ մի առնուցու դեղ ի դեղատուէ իմաստնոյ, հմնկեալ (?) դնել զբերանս յերկինս եւ զլեզուս ածեալ զերկրաւ՝ ասելով. Երկնչիմ՝ կասկածիմ զի մի մեռանիցիմ առաջի չիք կաթողիկոսացն: Եւ արգ յերկիւզն իւր եւ երկիւղիւ իւրով ըմբռնեցաւ քանզի ասէր Վասնզի մի ասիցեն եթէ յանիժից մերոց մեռաւ Ապրօն: Տեսանեմք լրացեալ զբան տէրունեան ի վերայ չար եւ վատ ծառային, որ ասէր ի մտի իւրում վասն Տեառն իւրոյ թէ Գիտեմ զի այր մի խիստ եւ ստամբակ էիր: Եւ դու զիս մի մեղադրիցես՝ թէ միայն ի Սաղմոսէ առեալ բան չարայարէ ի վերայ ապստամբին Աստուծոյ, զի լիովինն ի պատմութիւնս